


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«ԳԱՎԱՌԻ ԱԿԱԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ
2013Թ-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏՈՒՄ
ՔՈԼԵՋԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝


Կ.Ն.ԿՈՒՌՈՅԱՆ

« 11 » սեպտեմբերի 2013թ.

ԳԱՎԱՌԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- «ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-ի /այսուհետև՝ Քոլեջ/ ուսանողական խորհուրդը (այսուհետև ՈՒՄ) ինքնակառավարման, ուսանողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող ընտրովի ներկայացուցչական մարմին է:
- ՈՒՄ-ի լիազորություններն ու գործունեությունը սահմանվում են Քոլեջի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:
- ՈՒՄ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:
- ՈՒՄ-ի կանոնակարգը և դրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Քոլեջի խորհրդի կողմից:
- ՈՒՄ-ն իր խնդիրների լուծման համար համագործակցում է ԳՊԳՔ տնօրենի, ամբիոնների, այլ ստորաբաժանումների հետ:
- ՈՒՄ-ի անվանումն է՝ հայերեն՝ Ուսանողական խորհուրդ, ռուսերեն՝ Студенческий Совет, անգլերեն՝ Student Council, կարճ անվանումն է՝ հայերեն՝ ՈՒՄ, ռուսերեն՝ СС, անգլերեն՝ SU:

ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Խորհրդի հիմնական նպատակն է նպաստել ուսանողների ակտիվ մասնակցությանը ուսանողական կյանքին:

Իր նպատակների իրականացման համար խորհուրդն ունի հետևյալ առաքելությունները.

- Մասնակցել ուսումնական գործընթացի կատարելագործմանը,
- Տարածել տեղեկատվություն ուսանողների շրջանում,
- Ներկայացնել և պաշտպանել ուսանողների շահերը Քոլեջի կառավարման մարմիններում,
- ՈՒՄ-ում ստեղծել և զարգացնել համապատասխան ներքին կառույցներ,

- Ներկայացնել առաջարկներ ուսուցման որակի բարձրացման և այլ խնդիրների վերաբերյալ,
- Աջակցել Քոլեջում սպորտի զարգացմանը,
- Կազմակերպել և անցկացնել միջոցառումներ նվիրված հիշարժան օրերին,
- Աջակցել ուսանողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒԽ-ը իր գործունեությունը կազմակերպում է ժողովրդավարության, մարդու իրավունքի պաշտպանության, հրապարակայնության, փոխադարձ հարգանքի և համագործակցության վրա: ՈՒԽ-ի անդամների փոփոխությունը տեղի է ունենում անդամների Քոլեջն ավարտելու և ուսանողների նոր հոսքի ընդունելության հետ կապված:

- Ուսանողական խորհուրդը

- ա) նախապատրաստում և հրավիրում է ուսանողական ժողովներ, նիստեր, հետամուտ լինում նրանց որոշումների կենսագրոմանը, քննարկում ընթացիկ հարցեր,
- բ) ներկայացնում է Քոլեջի ՈՒԽ-ի,
- գ) համակարգում է կուրսերի ուսանողական խորհուրդների գործունեությունը
- դ) առաջարկում է թեկնածուներ Քոլեջի խորհրդի կազմում
- ե) կապեր է հաստատում ուսանողական, երիտասարդական կազմակերպությունների և շարժումների հետ,
- զ) կազմակերպում և անցկացնում է մրցույթներ, փառատոներ, հանդիպումներ, երեկոներ:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՈՒԽ-ի բարձրագույն մարմինը ուսանողների ներկայացուցիչների ընդհանուր ժողովն է, որը ձևավորվում է ներկայացուցչական սկզբունքով: Ժողովն իրավասու է, եթե ներկա են 2/3-ից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների մեծամասնությամբ:

Ընդհանուր ժողովը.

- ա) Քննարկում և հաստատում է ՈՒԽ-ի աշխատանքների հաշվետվությունները, գնահատում նրանց կատարած աշխատանքը,
- բ) Ուսանողների ձայների 2/3-ով գնահատում է նրանց կատարած աշխատանքը,
- գ) Փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրում է ՈՒԽ-ի նախագահ և տեղակալներ: Ընտրությունը համարվում է կայացած, եթե կողմ են քվեարկել մասնակիցների կեսից ավելին,
- դ) Քննարկում և հաստատում է ՈՒԽ-ի աշխատանքային պլանը:

Ուսանողական խորհրդի նախագահը`

- Ղեկավարում է ուսանողական խորհուրդը և կազմակերպում ՈՒԽ-ի աշխատանքը,
- ՈՒԽ-ի հաստատմանն է ներկայացնում ՈՒԽ-ի աշխատանքային պլանը,
- Իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ՈՒԽ-ին և տնօրենին,
- Իր բացակայության ժամանակ նախագահի պարտականությունների կատարումը դնում է ՈՒԽ-ի փոխնախագահի վրա,

Ուսանողական խորհրդի փոխնախագահը՝

- Ընտրվում է ՈՒԽ-ի անդամներից, առաջադրվում է նախագահի կողմից, այնուհետև հաստատվում խորհրդի ընդհանուր ժողովում,
- Մասնակցում է ՈՒԽ-ի աշխատանքների ղեկավարմանը, կոորդինացնում է ՈՒԽ-ի աշխատանքները, հետևում է ՈՒԽ-ի ընդունած որոշումների կատարմանը, կատարում է ՈՒԽ-ի նախագահի հանձնարարականները

Ուսանողական խորհրդի քարտուղարը՝

- Ընտրվում է ՈՒԽ-ի անդամներից, առաջադրվում է նախագահի կողմից, այնուհետև հաստատվում ՈՒԽ-ի ընդհանուր ժողովում
- Կազմակերպում է ՈՒԽ-ի գործավարությունը, կատարում կազմակերպչական աշխատանքներ

ՈՒԽ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՈՒԽ-ի անդամները իրավունք ունեն.

- Ընտրել և ընտրվել ՈՒԽ-ի ղեկավար մարմիններում,
- Մասնակցել Քոլեջի կառավարմանը՝ ընդգրկվելով խորհրդի կազմում, մասնակցել ՈՒԽ-ի, խմբակների, ակումբների ստեղծմանը և դրանց աշխատանքներին,
- Սույն Կանոնակարգի համաձայն մասնակցել ՈՒԽ-ի կառավարմանը,
- Մասնակցել ՈՒԽ-ի կողմից անցկացվող միջոցառումներին,
- ՈՒԽ-ի ղեկավար մարմիններին ներկայացնել նրա գործունեության վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ,
- Ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն ՈՒԽ-ի աշխատանքի վերաբերյալ,
- Անվճար օգտվել Քոլեջի գրադարանից, մարզական և առողջարանային, մշակութային-լուսավորչական ծառայություններից,
- Դուրս գալ ՈՒԽ-ի կազմից՝ նախագահին ներկայացվող գրավոր դիմումի համաձայն:

ՈՒԽ-ի անդամները պարտավոր են.

- Կատարել Քոլեջի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահության կանոնները,
- Օժանդակել ՈԻԽ-ի հեղինակության ամրապնդմանը, գործունեության կատարելագործմանը
- Ակտիվ մասնակցություն ցուցաբերել ՈԻԽ-ի կողմից անցկացվող միջոցառումների, ծրագրերի մշակմանը և նրանց իրականացմանը,
- Կատարել ՈԻԽ-ի ղեկավար մարմինների որոշումները,
- Խուսափել գործողություններից, որոնք կարող են վնասել ՈԻԽ-ի կամ նրա անդամների շահերին,
- Բարձր պահել Քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը,
- Պահպանել հասարակության բարոյական նորմերը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ուսանողական խորհուրդը իր գործունեությունը դադարեցնում է ուս. խորհրդի որոշմամբ՝ ձայների ընդհանուր թվի 2/3-ի կողմ քվեարկելու դեպքում: